ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ ՈՐՈՇ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

(Հաղորդագրություն 1)

ԴԱՎԻԴՅԱՆՑ Վ.Ա.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հանրապետական տեղեկատվական-վերլուծական կենտրոն, Երևան, Հայաստան

Առողջապահության և, մասնավորապես, համաճարակաբանական հսկողության առջև ծառացած խնդիրները պահանջում են համաճարակաբանական հսկողության բաղադրիչների զգալի բարեփոխում և զարգացում: Վերլուծվում է հարցի արդի վիճակը: Քննարկվում են այդ համակարգերի զարգացման հնարավոր ուղղությունները՝ համաճարակաբանական հսկողության ազգային ստանդարտների մշակում, լաբորատոր ծառայության զարգացում, կադրային ռեսուրսների ներուժի հզորացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում: Նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրացնել համաճարակաբանական հսկողության արդյունավետությունը:

Ուղղությունները

Օրենսդրական և իրավական դաշտի հետագա զարգացում (զարգացման գործընթացների հիմնական օրենքի/ների և Միջազգային առողջապահական կանոնների ներդրման լույսի ներքո դրանցից բխող օրենքների վերանայում և/կամ փոփոխություն (միգրացիայի, զբոսաշրջության և այլն), ենթաօրենսդրական ակտերի և նորմատիվ փաստաթղթերի համապատասխանեցում):

Փոփոխություններ մոտեցումներում (վարակիչ և մակաբուծային հիվանդությունների հահամաճարակաբանական հսկողության ազգային ստանդարտների մշակում, ծառայությունների ինտեգրում և Համաճարակաբանական հսկողության ստանդարտներից բխող ինտեգրացված հահամաճարակաբանական հսկողություն, Հայաստանի հանրային առողջապահության կայացման տեսական և գործնական հիմքերի ստեղծում):

Մեթոդների փոփոխություն. *պետական հակահամաճարակային հսկողության լաբորատոր ծառայության հետագա կատարելագործում, պետական հակահամաճարակային հսկողության տեղեկատվական-վերլուծական (համակարգչային-տեխնոլոգիական) ծառայության հետագա կատարելագործում, պետական հակահամաճարակային հսկողության կադրային ներուժի հետագա կատարելագործում:*

Մեխանիզմների փոփոխություն. *համաճարակաբանական հսկողության արդյունավետության գնահատման համակարգի մշակում և ներդրում, ՄԱԿ հարմարեցման և ներդրման մեխանիզմներից բխող ներդաշնակեցման սկզբունքների մշակում, իրականացվող միջոցառումների սոցիալ-տնտեսական նշանակության և սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատման համակարգի մշակում և ներդրում:*

Ակնկալվող արդյունքը. *համաճարակաբանական հսկողության որակի և արդյունավետության բարձրացում, ներգերատեսչական ինտեգրման ուժեղացում, միջգերատեսչական ինտեգրման ուժեղացում, միջազգային համագործակցության և փոխտեղեկատվության բարելավում:*

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY